ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ Ա Վ Ա Գ Ա Ն Ի

---

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2 մարտի 2017թ. N 28-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 2-Ի ՆԻՍՏԻ
ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետին համապատասխան ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

1. Հաստատել Ջերմուկ համայնքի ավագանու 2017 թվականի մարտի 2-ի նիստի հետևյալ ***օ ր ա կ ա ր գ ը.***

1.1. Ջերմուկ համայնքի Գնդեվազ գյուղում գտնվող հողամասերի նպատակային նշանակությունները փոխելու մասին.

*զեկ. համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ-ճարտարապետի պաշտոնակատար Ա. Գառնիկյան*

1.2. Ջերմուկ համայնքի Գնդեվազ գյուղում գտնվող, պետական սեփականություն հանդիսացող հողամասերը առանց մրցույթի կառուցապատման իրավունքով տրամադրելու, տարեկան վճարի չափը և պայմանները հաստատելու և Ջերմուկ համայնքի ավագանու 2016 թվականի նոյեմբերի 10-ի N 66-Ա որոշումը չեղյալ ճանաչելու մասին.

*զեկ. համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ-ճարտարապետի պաշտոնակատար Ա. Գառնիկյան*

1.3. Ջերմուկ համայնքի ավագանու 2017 թվականի փետրվարի 7-ի N 22-Ա որոշման 2-րդ կետի գործողությունը դադարեցնելու և այն չեղյալ ճանաչելու մասին.

*զեկ. համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի պաշտոնակատար Գ. Թադևոսյան*

1.4. Ջերմուկ համայնքի սեփականություն համարվող Կարմրաշեն գյուղի 2-րդ փողոցի N 4 շենքում գտնվող բնակարանը անհատույց սեփականության իրավունքով տրամադրելու մասին.

*զեկ. համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի պաշտոնակատար Գ. Թադևոսյան*

1.5. Հողամասի նպատակային նշանակության փոփոխության նպատակով Ջերմուկ համայնքի Գնդեվազ գյուղի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում նախատեսվող փոփոխությանը հավանություն տալու մասին.

*զեկ. համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ-ճարտարապետի պաշտոնակատար Ա. Գառնիկյան*

1.6. Ջերմուկ համայնքի սեփականություն համարվող հողամասը օտարելու համաձայնություն տալու, աճուրդային եղանակով վաճառքի մեկնարկային գինը և պայմանները հաստատելու մասին.

*զեկ. համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ-ճարտարապետի պաշտոնակատար Ա. Գառնիկյան*

1.7. «ՀՀ Վայոց ձորի մարզի Կարմրաշենի միջնակարգ դպրոց» և «ՀՀ Վայոց ձորի մարզի Հերիհերի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ներին գույք նվիրաբերելու մասին.

*զեկ. համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի պաշտոնակատար Գ. Թադևոսյան*

1.8. Նոր գրքեր ձեռք բերելու նպատակով Ջերմուկ համայնքի քաղաքային գրադարանին դրամական հատկացում կատարելու մասին.

*զեկ. համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի պաշտոնակատար Գ. Թադևոսյան*

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

*Ավագանու անդամներ՝*

| ազգանուն, անուն, հայրանուն | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| Բաբայան Կավկազ Զավենի | բացակա | | |
| Բաբաջանյան Սանասար Խաչատուրի | բացակա | | |
| Բագրատյան Արտակ Կառլենի | [signature] | | |
| Բունիաթյան Մխիթար Խաչատուրի | [signature] | | |
| Գևորգյան Արտավազդ Վարազդատի | [signature] | | |
| Գրիգորյան Արմեն Գրիշայի | [signature] | | |
| Համբարձումյան Մխիթար Սամվելի | [signature] | | |
| Հովհաննիսյան Նարեկ Հարությունի | [signature] | | |
| Սարգսյան Համիկ Ժորայի | [signature] | | |
| Սիմոնյան Արտուշ Էդվարդի | [signature] | | |
| Ստեփանյան Գագիկ Ստեփանի | [signature] | | |

Որոշումն ընդունված է՝ կողմ- ......9...... դեմ-......0...... ձեռնպահ- ...0...

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ [signature] Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2017 մարտի 2
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ Ա Վ Ա Գ Ա Ն Ի

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

2 մարտի 2017թ. N 29-Ա

## ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՆԴԵՎԱԶ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետին, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետին և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011թ. դեկտեմբերի 29-ի «Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներ կազմելու կարգը հաստատելու մասին և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2001 թվականի հունվարի 17-ի թիվ 30 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1918-Ն որոշմամբ հաստատված կարգի 17-րդ կետին համապատասախն և հիմք ընդունելով «Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի» 23.02.2017թ. N 16 դրական եզրակացությունը ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

1. Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքի Գնդեվազ գյուղի տարածքում գտնվող «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» փակ բաժնետիրական ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող գյուղատնտեսական նշանակության 10-016-0228-0083, 10-016-0228-0085 և 10-016-0229-0049 կադաստրային ծածկագրերով 774 քմ ընդհանուր մակերեսով վարելահողերը փոխադրել էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի կատեգորիա՝ ՎԶՄԲ կողմից ֆինանսավորվող «էլեկտրակառավարման հուսալիություն» ծրագրի շրջանակներում իրականացվող Հրազդան ՋԷԿ–ը Շինուհայր ենթակայանին միացնող 220 կՎ էլեկտրահաղորդման օդային գծի վերակառուցման համար նախատեսված բարձրավոլտ էլեկտրական հենասյուների (3 միավոր) կառուցման ու սպասարկման համար:.

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

*Ավագանու անդամներ՝*

| ազգանուն, անուն, հայրանուն | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| Բաբայան Կավկազ Զավենի | | | |
| Բաբաջանյան Սանասար Խաչատուրի | | | |
| Բագրատյան Արտակ Կառլենի | | | |

| | | | |
|---|---|---|---|
| Բունիաթյան Մխիթար Խաչատուրի | | | |
| Գևորգյան Արտավազդ Վարազդատի | | | |
| Գրիգորյան Արմեն Գրիշայի | | | |
| Համբարձումյան Մխիթար Սամվելի | | | |
| Հովհաննիսյան Նարեկ Հարությունի | | | |
| Սարգսյան Հասմիկ Ժորայի | | | |
| Սիմոնյան Արտուշ Էդվարդի | | | |
| Ստեփանյան Գագիկ Ստեփանի | | | |

Որոշումն ընդունված է՝ կողմ- .....9..... դեմ-.....0..... ձեռնպահ- ...0...

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2017 մարտի 2
Ջերմուկ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ Ա Վ Ա Գ Ա Ն Ի

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

2 մարտի 2017թ. N 30-Ա

### ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՆԴԵՎԱԶ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՌԱՆՑ ՄՐՑՈՒՅԹԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ,ՏԱՐԵԿԱՆ ՎՃԱՐԻ ՉԱՓԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 10-ի N 66-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՉԵՂՅԱԼ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 21-րդ ենթակետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 46-րդ և $48^1$ հոդվածներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2017 թվականի փետրվարի 16-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշման մեջ լրացում կատարելու մասին» N 139 -Ն որոշումը, հիմք ընդունելով ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության ս/թ փետրվարի 14-ի N 1 դրական եզրակացությունը ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

1. Համաձայնություն տալ Ջերմուկ համայնքի Գնդեվազ գյուղում գտնվող, պետական սեփականություն հանդիսացող 401,243 հա ընդհանուր մակերեսով արդյունաբերական նպատակային նշանակությամբ հողամասերը, որոնք ընդգրկված են «Լիդիան Արմենիա» ՓԲ ընկերության լեռնահատկացման սահմաններում, առանց մրցույթի կառուցապատման իրավունքով տրամադրել ընդերքօգտագործման իրավունք ունեցող վերը նշված ընկերությանը: Կառուցապատման իրավունքով տրամադրվող հողամասի հողակտորների ցանկը՝ համաձայն սույն որոշման հավելվածի:

2.Սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման տարեկան վճարի գինը սահմանել 167 000 (հարյուր վաթսունյոթ հազար) դրամ՝ 1 հեկտարի համար, ժամկետը՝ 2034 թվականի հունվարի 1-ը, նպատակը՝ արդյունաբերական օբյեկտներ կառուցելու համար:

3. «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 75-րդ հոդվածի 1-ին կետին համապատասխան չեղյալ ճանաչել Ջերմուկ համայնքի ավագանու 2016 թվականի նոյեմբերի 10-ի «Ջերմուկ համայնքի Գնդեվազ գյուղում գտնվող, պետական սեփականություն հանդիսացող հողամասերը կառուցապատման իրավունքով տրամադրելու համաձայնություն տալու, տարեկան վճարի գինը և պայմանները հաստատելու մասին» N 66-Ա որոշումը:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

*Ավագանու անդամներ՝*

| ազգանուն, անուն, հայրանուն | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| Բաբայան Կավկազ Զավենի | բացակա | | |
| Բաբաջանյան Սանասար Խաչատուրի | բացակա | | |
| Բագրատյան Արտակ Կաղլենի | | | |
| Բունիաթյան Մխիթար Խաչատուրի | | | |
| Գևորգյան Արտավազդ Վարազդատի | | | |
| Գրիգորյան Արմեն Գրիշայի | | | |
| Համբարձումյան Մխիթար Սամվելի | | | |
| Հովհաննիսյան Նարեկ Հարությունի | | | |
| Սարգսյան Հասմիկ Ժորայի | | | |
| Սիմոնյան Արտուշ Էդվարդի | | | |
| Ստեփանյան Գագիկ Ստեփանի | | | |

Որոշումն ընդունված է ՝ կողմ- ......9...... դեմ-......0...... ձեռնպահ- ...0...

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2017 մարտի 2
Ջերմուկ

*Հավելված*
*Ջերմուկ համայնքի ավագանու 2017 թ.*
*մարտի 2-ի N 30-Ա որոշման*

| հ/հ | Հողամասի հասցեն | Վկայականի համարը | Հողամասի ծածկագիրը | Հողամասի մակերեսը (հա |
|---|---|---|---|---|
| 1 | Մարզ Վայոց Ձոր, համայնք Ջերմուկ գյուղ Գնդեվազ Ծաղկոտն թաղամաս 7 | 09122016-10-0024 | 10-016-0272-0002 | 5.60539 |
| 2 | Մարզ Վայոց Ձոր, համայնք Ջերմուկ գյուղ Գնդեվազ Ծաղկոտն թաղամաս 11 հողամաս | 09122016-10-0013 | 10-016-0272-0007 | 0.6458 |
| 3 | Մարզ Վայոց Ձոր, համայնք Ջերմուկ գյուղ Գնդեվազ Ծաղկոտն թաղամաս 6 հողամաս | 09122016-10-0005 | 10-016-0272-0008 | 0.13494 |
| 4 | Մարզ Վայոց Ձոր, համայնք Ջերմուկ գյուղ Գնդեվազ Ծաղկոտն թաղամաս 10 հողամաս | 09122016-10-0015 | 10-016-0272-0009 | 2.14473 |
| 5 | Մարզ Վայոց Ձոր, համայնք Ջերմուկ գյուղ Գնդեվազ Ծաղկոտն թաղամաս 4 | 09122016-10-0018 | 10-016-0272-0010 | 4.60234 |
| 6 | Մարզ Վայոց Ձոր, համայնք Ջերմուկ գյուղ Գնդեվազ Ծաղկոտն թաղամաս 8 | 09122016-10-0031 | 10-016-0272-0011 | 7.19964 |
| 7 | Մարզ Վայոց Ձոր, համայնք Ջերմուկ գյուղ Գնդեվազ Ծաղկոտն թաղամաս 9 հողամաս | 09122016-10-0026 | 10-016-0272-0012 | 0.49210 |
| 8 | Մարզ Վայոց Ձոր, համայնք Ջերմուկ գյուղ Գնդեվազ Ծաղկոտն թաղամաս 2 հողամաս | 09122016-10-0040 | 10-016-0272-0013 | 1.86220 |
| 9 | Մարզ Վայոց Ձոր, համայնք Ջերմուկ գյուղ Գնդեվազ Ծաղկոտն թաղամաս 5 հողամաս | 09122016-10-0021 | 10-016-0272-0014 | 10.90548 |
| 10 | Մարզ Վայոց Ձոր, համայնք Ջերմուկ գյուղ Գնդեվազ Ծաղկոտն թաղամաս 1 | 09122016-10-0034 | 10-016-0272-0015 | 23.41339 |
| 11 | Մարզ Վայոց Ձոր, համայնք Ջերմուկ գյուղ Գնդեվազ Ծաղկոտն թաղամաս 3 | 09122016-10-0033 | 10-016-0272-0016 | 5.84212 |
| 12 | Մարզ Վայոց Ձոր, համայնք Ջերմուկ գյուղ Գնդեվազ Արծաթավան թաղամաս 11 | 09122016-10-0022 | 10-016-0273-0002 | 41.65468 |
| 13 | Մարզ Վայոց Ձոր, համայնք Ջերմուկ գյուղ Գնդեվազ Արծաթավան թաղամաս 9 | 09122016-10-0023 | 10-016-0274-0001 | 11.09604 |
| 14 | Մարզ Վայոց Ձոր, համայնք Ջերմուկ գյուղ Գնդեվազ Արծաթավան թաղամաս 8 | 09122016-10-0036 | 10-016-0274-0002 | 20.12065 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 15 | Մարզ Վայոց Ձոր, համայնք Ջերմուկ գյուղ Գնդեվազ Ծաղկոտն թաղամաս 15 | 09122016-10-0029 | 10-016-0276-0001 | 154.9675 |
| 16 | Մարզ Վայոց Ձոր, համայնք Ջերմուկ գյուղ Գնդեվազ Արծաթավան թաղամաս 13 | 09122016-10-0017 | 10-016-0276-0010 | 0.0116 |
| 17 | Մարզ Վայոց Ձոր, համայնք Ջերմուկ գյուղ Գնդեվազ Արծաթավան թաղամաս 1 | 09122016-10-0004 | 10-016-0276-0011 | 86.322 |
| 18 | Մարզ Վայոց Ձոր, համայնք Ջերմուկ գյուղ Գնդեվազ Արծաթավան թաղամաս 2 | 09122016-10-0035 | 10-016-0276-0014 | 0.806 |
| 19 | Մարզ Վայոց Ձոր, համայնք Ջերմուկ գյուղ Գնդեվազ Արծաթավան թաղամաս 5 | 09122016-10-0037 | 10-016-0276-0015 | 0.8586 |
| 20 | Մարզ Վայոց Ձոր, համայնք Ջերմուկ գյուղ Գնդեվազ Արծաթավան թաղամաս 6 | 09122016-10-0032 | 10-016-0276-0016 | 1.6 |
| 21 | Մարզ Վայոց Ձոր, համայնք Ջերմուկ գյուղ Գնդեվազ Ծաղկոտն թաղամաս 18 հողամաս | 09122016-10-0008 | 10-016-0276-0018 | 0.2983 |
| 22 | Մարզ Վայոց Ձոր, համայնք Ջերմուկ գյուղ Գնդեվազ Արծաթավան թաղամաս 7 հողամաս | 09122016-10-0012 | 10-016-0276-0019 | 4.6162 |
| 23 | Մարզ Վայոց Ձոր, համայնք Ջերմուկ գյուղ Գնդեվազ Արծաթավան թաղամաս 12 հողամաս | 09122016-10-0006 | 10-016-0276-0020 | 5.3170 |
| 24 | Մարզ Վայոց Ձոր, համայնք Ջերմուկ գյուղ Գնդեվազ Արծաթավան թաղամաս 3 | 09122016-10-0016 | 10-016-0276-0022 | 1.733 |
| 25 | Մարզ Վայոց Ձոր, համայնք Ջերմուկ գյուղ Գնդեվազ Արծաթավան թաղամաս 10 հողամաս | 09122016-10-0014 | 10-016-0276-0023 | 5.0500 |
| 26 | Մարզ Վայոց Ձոր, համայնք Ջերմուկ գյուղ Գնդեվազ Արծաթավան թաղամաս 4 հողամաս | 09122016-10-0020 | 10-016-0276-0024 | 0.0410 |
| 27 | Մարզ Վայոց Ձոր, համայնք Ջերմուկ գյուղ Գնդեվազ Ծաղկոտն թաղամաս 12 հողամաս | 09122016-10-0007 | 10-016-0278-0002 | 2.0623 |
| 28 | Մարզ Վայոց Ձոր, համայնք Ջերմուկ գյուղ Գնդեվազ Ծաղկոտն թաղամաս 13 հողամաս | 09122016-10-0039 | 10-016-0279-0002 | 0.0065 |
| 29 | Մարզ Վայոց Ձոր, համայնք Ջերմուկ գյուղ Գնդեվազ Ծաղկոտն թաղամաս 19 հողամաս | 09122016-10-0010 | 10-016-0714-0001 | 0.2440 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 30 | Մարզ Վայոց Ձոր, համայնք Ջերմուկ գյուղ Գնդեվազ Ծաղկոտն թաղամաս 20 | 09122016-10-0030 | 10-016-0714-0004 | 0.0073 |
| 31 | Մարզ Վայոց Ձոր, համայնք Ջերմուկ գյուղ Գնդեվազ Ծաղկոտն թաղամաս 24 | 09122016-10-0011 | 10-016-0715-0001 | 0.31618 |
| 32 | Մարզ Վայոց Ձոր, համայնք Ջերմուկ գյուղ Գնդեվազ Ծաղկոտն թաղամաս 17 հողամաս | 09122016-10-0038 | 10-016-0716-0001 | 0.19831 |
| 33 | Մարզ Վայոց Ձոր, համայնք Ջերմուկ գյուղ Գնդեվազ Ծաղկոտն թաղամաս 21 | 09122016-10-0027 | 10-016-0717-0005 | 0.52554 |
| 34 | Մարզ Վայոց Ձոր, համայնք Ջերմուկ գյուղ Գնդեվազ Ծաղկոտն թաղամաս 22 հողամաս | 09122016-10-0003 | 10-016-0718-0001 | 0.05641 |
| 35 | Մարզ Վայոց Ձոր, համայնք Ջերմուկ գյուղ Գնդեվազ Ծաղկոտն թաղամաս 23 հողամաս | 09122016-10-0025 | 10-016-0718-0002 | 0.00139 |
| 36 | Մարզ Վայոց Ձոր, համայնք Ջերմուկ գյուղ Գնդեվազ Ծաղկոտն թաղամաս 18 հողամաս | 09122016-10-0009 | 10-016-0719-0003 | 0.36461 |
| 37 | Մարզ Վայոց Ձոր, համայնք Ջերմուկ գյուղ Գնդեվազ Ծաղկոտն թաղամաս 16 հողամաս | 09122016-10-0028 | 10-016-0719-0004 | 0.10751 |
| | Ընդամենը | | | 401.24344 |

ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Գ. ԹԱՌԵՎՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ Ա Վ Ա Գ Ա Ն Ի

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

2 մարտի 2017թ. N 31-Ա

## ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 7-ի N 22-Ա ՈՐՈՇՄԱՆ 2-ՐԴ ԿԵՏԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ԵՎ ԱՅՆ ՉԵՂՅԱԼ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ և 71-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետերի, նույն հոդվածի 6-րդ կետի և 75-րդ հոդվածի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարության 17.02.2017թ-ի թիվ 03/14.2/762-17 գրությունը ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

1. Դադարեցնել Ջերմուկ համայնքի ավագանու 2017 թվականի փետրվարի 7-ի «Ջերմուկ համայնքի Գնդեվազ գյուղում գտնվող հողամասերի նպատակային նշանակությունները փոխելու մասին» N 22-Ա որոշման 2-րդ կետի գործողությունը և այն չեղյալ ճանաչել:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

*Ավագանու անդամներ՝*

| ազգանուն, անուն, հայրանուն | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| Բաբայան Կավկազ Զավենի | բացակա | | |
| Բաբաջանյան Սանասար Խաչատուրի | բացակա | | |
| Բագրատյան Արտակ Կառլենի | | | |
| Բունիաթյան Մխիթար Խաչատուրի | | | |
| Գևորգյան Արտավազդ Վարազդատի | | | |
| Գրիգորյան Արմեն Գրիշայի | | | |
| Համբարձումյան Մխիթար Սամվելի | | | |
| Հովհաննիսյան Նարեկ Հարությունի | | | |
| Սարգսյան Համլիկ Ժորայի | | | |
| Սիմոնյան Արտուշ Էդվարդի | | | |
| Ստեփանյան Գագիկ Ստեփանի | | | |

Որոշումն ընդունված է ՝ կողմ- ....9....... դեմ-....0...... ձեռնպահ- ..0..

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2017 մարտի 2
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ Ա Վ Ա Գ Ա Ն Ի

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

2 մարտի 2017թ. N 32-Ա

## ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՆԴԵՎԱԶ ԳՅՈՒՂԻ ՀՈՂԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՍԽԵՄԱՅՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆԸ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 29-րդ կետի պահանջներով և համաձայն Հայաստանի Հանրապետության Կառավարության 2011թ. դեկտեմբերի 29-ի «Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներ կազմելու կարգը հաստատելու մասին և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2001 թվականի հունվարի 17-ի թիվ 30 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1918-Ն որոշման ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

1.Հավանություն տալ Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքի Գնդեվազ գյուղի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում նախատեսվող փոփոխությանը. համայնքային սեփականության գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքի 0,186 հա մակերեսով (կադաստրային ծածկագիրը՝ 10-016-0222-) հողամասը փոխադրել բնակավայրերի նշանակության հողերի կատեգորիա՝ հասարակական կառուցապատման հողերի գործառնական նշանակությամբ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

*Ավագանու անդամներ՝*

| ազգանուն, անուն, հայրանուն | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| Բաբայան Կավկազ Զավենի | | | |
| Բաբաջանյան Սանասար Խաչատուրի | | | |
| Բագրատյան Արտակ Կառլենի | | | |
| Բունիաթյան Մխիթար Խաչատուրի | | | |
| Գևորգյան Արտավազդ Վարազդատի | | | |
| Գրիգորյան Արմեն Գրիշայի | | | |

| | | | |
|---|---|---|---|
| Համբարձումյան Մխիթար Սամվելի | [signature] | | |
| Հովհաննիսյան Նարեկ Հարությունի | [signature] | | |
| Սարգսյան Հասմիկ Ժորայի | [signature] | | |
| Սիմոնյան Արտուշ Էդվարդի | [signature] | | |
| Ստեփանյան Գագիկ Ստեփանի | [signature] | | |

Որոշումն ընդունված է՝ կողմ- ...9... դեմ-...0... ձեռնպահ- ...0

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ [signature] Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2017 մարտի 2
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ Ա Վ Ա Գ Ա Ն Ի

# Ո Ր Ո Շ Ու Մ

2 մարտի 2017թ. N 33-Ա

## ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ, ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՎԱՃԱՌՔԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետի հիման վրա, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67 հոդվածին, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետի «գ» ենթակետին և 22-րդ կետին համապատասխան ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

1.Համաձայնվել Ջերմուկ համայնքի սեփականություն համարվող Բարեկամության փողոցի N 2/5 և Բարեկամության փողոցի N 2/6 հասցեներում գտնվող, համապատասխանաբար՝ 130,6 քմ և 346,9 քմ մակերեսներով, հողամասերը (ծածկագիր՝ 10-002-0018-, նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի) ըստ քաղաքի գլխավոր հատակագծի աճուրդով օտարելու մասին Ջերմուկի համայնքի ղեկավարի առաջարկությանը՝ հաստատելով հողամասի օտարման նպատակը՝ հասարակական կառուցապատման համար, մեկնարկային գինը՝ համապատասխանաբար՝ 163 000 դրամ և 435 000 դրամ, կառուցապատման ժամկետը՝ 3 տարի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

*Ավագանու անդամներ՝*

| ազգանուն, անուն, հայրանուն | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| Բաբայան Կավկազ Զավենի | | | |
| Բաբաջանյան Սանասար Խաչատուրի | | | |
| Բագրատյան Արտակ Կառլենի | | | |
| Բունիաթյան Մխիթար Խաչատուրի | | | |
| Գևորգյան Արտավազդ Վարազդատի | | | |
| Գրիգորյան Արմեն Գրիշայի | | | |

| | | | |
|---|---|---|---|
| Համբարձումյան Մխիթար Սամվելի | | | |
| Հովհաննիսյան Նարեկ Հարությունի | | | |
| Սարգսյան Համմիկ Ժորայի | | | |
| Սիմոնյան Արտուշ Էդվարդի | | | |
| Ստեփանյան Գագիկ Ստեփանի | | | |

Որոշումն ընդունված է՝ կողմ- .....9..... դեմ-.....0..... ձեռնպահ- ...0...

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2017 մարտի 2
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ Ա Վ Ա Գ Ա Ն Ի

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

2 մարտի 2017թ. N 34-Ա

## ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԿԱՐՄՐԱՇԵՆ ԳՅՈՒՂԻ 2-ՐԴ ՓՈՂՈՑԻ N 4 ՇԵՆՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետին համապատասխան ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

1.Համաձայնվել Ջերմուկ համայնքի սեփականություն համարվող Կարմրաշեն գյուղի 2-րդ փողոցի 4-րդ շենքի N 2 բնակարանը, մակերեսը՝ 55,08 քմ, համայնքի բնակիչ, այդ բնակարանը օգտագործող և տիրապետող Կարմրաշեն գյուղի բնակիչ Գարիկ Վարուժի Առաքելյանին անհատույց սեփականության իրավունքով տրամադրելու մասին համայնքի ղեկավարի առաջարկությանը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից

*Ավագանու անդամներ՝*

| ազգանուն, անուն, հայրանուն | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| Բաբայան Կավկազ Զավենի | | | |
| Բաբաջանյան Սանասար Խաչատուրի | | | |
| Բագրատյան Արտակ Կառլենի | | | |
| Բունիաթյան Մխիթար Խաչատուրի | | | |
| Գևորգյան Արտավազդ Վարազդատի | | | |
| Գրիգորյան Արմեն Գրիշայի | | | |
| Համբարձումյան Մխիթար Սամվելի | | | |
| Հովհաննիսյան Նարեկ Հարությունի | | | |
| Սարգսյան Համիկ Ժորայի | | | |
| Սիմոնյան Արտուշ Էդվարդի | | | |
| Ստեփանյան Գագիկ Ստեփանի | | | |

Որոշումն ընդունված է ՝ կողմ- ……9…… դեմ-……0…… ձեռնպահ- ..0....

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2017 մարտի 2
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ Ա Վ Ա Գ Ա Ն Ի

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2 մարտի 2017թ. N 35-Ա

«ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԿԱՐՄՐԱՇԵՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ԵՎ
«ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՀԵՐՀԵՐԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ » ՊՈԱԿ-ՆԵՐԻՆ
ԳՈՒՅՔ ՆՎԻՐԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 21-րդ ենթակետին համապատասխան ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

1. Հաշվի առնելով այն, որ 2016 թվականին «Վարչատարածքային բաժանման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում կատարած փոփոխությունների հետևանքով Կարմրաշեն ու Հերհեր գյուղական համայնքները միավորվել են Ջերմուկ համայնքին, և համայնքի ավագանին հիշյալ գյուղերում չի նախատեսել գրադարանավարի հաստիքներ՝ այդ գյուղերում մինչ խոշորացումը գործող գրադարանների գրքային ֆոնդերը նվիրաբերել համապատասխանաբար «ՀՀ Վայոց ձորի մարզի Կարմրաշենի միջնակարգ դպրոց» և «ՀՀ Վայոց ձորի մարզի Հերհերի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ներին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

*Ավագանու անդամներ՝*

| ազգանուն, անուն, հայրանուն | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| Բաբայան Կավկազ Զավենի | | | |
| Բաբաջանյան Սանասար Խաչատուրի | | | |
| Բագրատյան Արտակ Կառլենի | | | |
| Բունիաթյան Մխիթար Խաչատուրի | | | |
| Գևորգյան Արտավազդ Վարազդատի | | | |
| Գրիգորյան Արմեն Գրիշայի | | | |
| Համբարձումյան Մխիթար Սամվելի | | | |
| Հովհաննիսյան Նարեկ Հարությունի | | | |

| | | | |
|---|---|---|---|
| Սարգսյան Համիկ Ժորայի | | | |
| Սիմոնյան Արտուշ Էդվարդի | | | |
| Ստեփանյան Գագիկ Ստեփանի | | | |

Որոշումն ընդունված է՝ կողմ- ……9…… դեմ-……0…… ձեռնպահ- …0…

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2017 մարտի 2
Ջերմուկ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ Ա Վ Ա Գ Ա Ն Ի

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

2 մարտի 2017թ. N 36-Ա

ՆՈՐ ԳՐՔԵՐ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՀԱՏԿԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետին համապատասխան ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

1. Համաձայնվել Ջերմուկ համայնքի քաղաքային գրադարանին նոր գրքեր ձեռք բերելու նպատակով 500 000 (հինգ հարյուր հազար) դրամ հատկացնելու վերաբերյալ համայնքի ղեկավարի առաջարկությանը:

2. Սույն որոշման առաջին կետում նշված նպատակի համար ֆինանսական հատկացումը կատարել համայնքի բյուջեի ֆոնդային մասի միջոցներից:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից

*Ավագանու անդամներ՝*

| ազգանուն, անուն, հայրանուն | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| Բաբայան Կավկազ Զավենի | | | |
| Բաբաջանյան Սանասար Խաչատուրի | | | |
| Բագրատյան Արտակ Կառլենի | | | |
| Բունիաթյան Մխիթար Խաչատուրի | | | |
| Գևորգյան Արտավազդ Վարազդատի | | | |
| Գրիգորյան Արմեն Գրիշայի | | | |
| Համբարձումյան Մխիթար Սամվելի | | | |
| Հովհաննիսյան Նարեկ Հարությունի | | | |
| Սարգսյան Հասմիկ Ժորայի | | | |
| Սիմոնյան Արտուշ Էդվարդի | | | |
| Ստեփանյան Գագիկ Ստեփանի | | | |

Որոշումն ընդունված է ՝ կողմ- ......9...... դեմ-......0...... ձեռնպահ- ...0...

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2017 մարտի 2
Ջերմուկ